ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Պետական ոչ առևտրային կազմակերպություն

0005, Երևան, Բուռնազյան 37, հեռ.՝ 57-84-53, 57-84-55, կայք՝ www.ktak.am, էլ. փոստ՝ info@ktak.am

№ 162/23

11.12.2023թ.

ՀՀ ֆինանսների նախարար

Վահե Հովհաննիսյանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«ԿՐԹԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ

«ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-23/08» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐՔԻ ՄԱՍՆԱԿԻՑ «ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿ» Ա/Ձ–ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23.10.2023թ. հայտարարվել էր «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ–ի (այսուհետ՝ ԿՏԱԿ) կարիքների համար «Դեկտեմբերի 1-3-ը Գյումրի քաղաքի հյուրանոցում իթվինինգի ուսուցիչների աշխատանքային խորհրդակցության անցկացման» ծառայության ձեռքբերման նպատակով «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-23/08» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Նշված գնման ընթացակարգին հայտ էր ներկայացրել 2 մասնակից. ընտրված մասնակից է ճանաչվել «Արմենյան Հայկ» Ա/Ձ–ն, որի հետ օրենքով սահմանված կարգով 23.11.2023թ. կնքվել է N «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-23/08-1» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրով սահմանված էր, որ «Արմենյան Հայկ» Ա/Ձ–ն պարտավոր էր մատուցել Դեկտեմբերի 1-3-ը Գյումրի քաղաքի «Գյումրի» հյուրանոցում Իթվինինգի ուսուցիչների աշխատանքային խորհրդակցության անցկացման ծառայությունը: Սակայն, 2023թ. նոյեմբերի 29–ին lilit@ktak.am էլեկտրոնային փոստին «Արմենյան Հայկ» Ա/Ձ–ից (իր կողմից հայտի մեջ նշված էլեկտրոնային փոստից՝ eloyanvaruzhan2020@gmail.com) ստացվեց գրություն՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Հարգելի պարոն Պողոսյան, Հայտնում ենք Ձեզ, որ տեխնիկական խնդիրների պատճառով մենք չենք կարող իրականացնել Գյումրի քաղաքի հյուրանոցային իթվինինգը»:

Հիմք ընդունելով Կատարողի գրությունը Պայմանագրի կատարումից հրաժարվելու վերաբերյալ և Պայմանագրի 2.1.2 կետը՝ Պատվիրատուն 2023թ. նոյեմբերի 30-ին միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Պատվիրատուն 07.12.2023թ. դիմել է բանկին գումարը գանձելու պահանջով (կցվում է) և մինչ սահմանված ժամկետի ավարտը գումար չի փոխանցվել վճարման պահանջագրերով նշված Պատվիրատուի հաշվեհամարին, և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

«ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-23/08» ծածկագրով ԳՀ ընթացակարգի մասնակից «Արմենյան Հայկ» Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ստորև ներկայացվում է համապատասխան տեղեկատվությունը՝ աղյուսակի տեսքով.

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
«Արմենյան Հայկ» Ա/Ձ	40140304	ՀՀ, ք. Երևան, Լեոյի փող,. 74 տ.		«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետ Հրաժարվել է պայմանագրի կատարումից, որի հետևանքով պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծվել է		11.12.2023թ. «ԿՏԱԿ-ԳՀԾՁԲ-23/08»

Տնօրեն՝ Արտակ Դոլուխան